

**ՊԱՇՏՈՆԻ ՆԿԱՐԱԳԻՐ**  
**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ**  
**ԹՈՒՉՔԱՅԻՆ ՊԻՏԱՆԻՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ-ՏԵՍՈՒՉ**

**1. Ընդհանուր դրույթներ**

**1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը**

Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) թռիչքային պիտանիության վարչության (այսուհետ՝ Վարչություն) գլխավոր մասնագետ-տեսուչ (այսուհետ՝ Գլխավոր մասնագետ-տեսուչ) (ծածկագիրը՝ 22-4-ՔԱԿ-23.1-3):

**1.2. Ենթակա և հաշվետու է**

Գլխավոր մասնագետ-տեսուչն անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

**1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ**

Գլխավոր մասնագետ-տեսուչն իրեն ենթակա աշխատողներ չունի:

**1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները**

Գլխավոր մասնագետ-տեսուչի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության գլխավոր մասնագետ-տեսուչներից մեկը:

**1.5. Աշխատավայրը**

Հայաստան, ք.Երևան, Աջափնյակ վարչական շրջան, «Զվարթնոց» օդանավակայան:

**2. Պաշտոնի բնութագիրը**

**(Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները)**

**2.1. Աշխատանքի բնույթը՝**

1. իրականացնում է ՀՀ քաղաքացիական ավիացիայի տեխնիկական սպասարկման և վերանորոգման ու թռիչքային պիտանիության պահպանման կազմակերպություններում միասնական տեխնիկական քաղաքականության վերահսկումը.

2. կատարում է օդանավերի շահագործման մասին ստացվող տեղեկությունների, թերությունների, պատահարների, միջադեպերի տեխնոլոգիական խախտումների հետևողական վերլուծություն և մշակում է օդանավերի թռիչքային պիտանիության պահպանման ու հուսալիության բարձրացմանն ուղղված միջոցառումներ.

3. իրականացնում է տեխնիկական սպասարկման և վերանորոգման կազմակերպությունների ու տեխնիկական սպասարկման գծային կայանների, ինչպես նաև թռիչքային պիտանիության պահպանման կազմակերպությունների սերտիֆիկացում և դրանց ստուգում՝ համաձայն սահմանված կարգի.

4. կարող է մասնակցել ՀՀ տարածքում քաղաքացիական օդանավերի հետ ավիացիոն միջադեպերի, ինչպես նաև ՀՀ-ում գրանցված օդանավերի հետ ՀՀ սահմաններից դուրս տեղի ունեցած ավիացիոն միջադեպերի հետաքննությունների աշխատանքներին՝ համապատասխան հանձնաժողովների կազմում.

5. Կոմիտեի կողմից սահմանված թռիչքային պիտանիության պահպանմանը վերաբերվող պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով մասնակցում է հետևյալ հարցերի ուսումնասիրմանը.

ա. օդանավերի և համալրող արտադրատեսակների ծառայության ժամկետների երկարաձգում,

բ. վնասված օդանավերի վերականգնում,

գ. ավելացված պարբերականությամբ օդանավերի տեխնիկական սպասարկման նոր կանոնակարգերի ներդրում,

դ. օդանավերի, նրա համակարգերի և համալրող արտադրատեսակների սպասարկում էլնելով տեխնիկական վիճակից,

ե. օդանավերի տեխնիկական շահագործման ընթացքում սահմանափակումներ սահմանող կամ վերացնող տեխնիկական որոշումներ.

6. իրականացնում է ՀՀ-ում գրանցված կամ շահագործվող օդանավերի թռիչքային պիտանիության, ինչպես նաև թռիչքային անվտանգության տեսակետից կարևոր համարվող օդանավի պահեստամասերի, հարմարանքների եւ սարքավորումների ուսումնասիրություններ և ստուգումներ.

7. անհրաժեշտության դեպքում սահմանված կարգով առաջարկություններ է ներկայացնում նորմատիվ և հրահանգիչ փաստաթղթերում լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ.

8. մասնակցում է նոր օդանավակայաններ և ավիաուղիներ շահագործելու համար կազմակերպվող տեխնիկական թռիչքներին.

9. իր իրավասության սահմաններում մասնակցում է հետևյալ գործառույթների իրականացմանը.

ա. ՀՀ տարածքում և սահմաններից դուրս շահագործվող ՀՀ-ում գրանցված օդանավերի թռիչքային պիտանիության ապահովման ստուգումների անցկացում.

բ. ՀՀ տարածքի օդանավակայաններ ժամանած օտարերկրյա օդանավերի ստուգումների իրականացում՝ համաձայն Եվրոպական Միության Թռիչքների Անվտանգության Գործակալության (EASA) կողմից սահմանված չափանիշների.

10. մասնակցում է ՀՀ-ում գրանցված օդանավերի ստուգումներին դրանց թռիչքային պիտանիության վիճակը ուսումնասիրելու նպատակով.

11. մասնակցում է օդանավի գրանցման, թռիչքային պիտանիության, ռադիոկայանի, աղմուկի վկայականների, թռիչքի թույլտվության տրման, դրանց գործողության ժամկետների երկարաձգման, այլ պետության կողմից տրված թռիչքային պիտանիության վկայականի ճանաչման աշխատանքներին.

12. մասնակցում է ՀՀ-ում գրանցված օդանավ շահագործող ընկերությունների ստուգումներին:

13. իրականացնում է օդանավ շահագործողների հայտերի քննարկում և հետևյալ գործառույթների ապահովում.

ա. օդանավին 24-բիթային հասցեի տրամադրում և գրանցում Եվրոկոնտրոլում,

բ. կրճատ ուղղաձիգ տարանջատման մինիմումի (RVSM) պայմաններում թռիչքների իրականացման վերաբերյալ ուսումնասիրություն և եզրակացություն,

գ. RNAV օդային ուղիներով թռիչքներ իրականացնելու վերաբերյալ ուսումնասիրություն և եզրակացություն,

դ. ELT վթարային ռադիոփարոսների գրանցում «ԿՈՍՊԱՍ-ՍԱՐՍԱՏ» համակարգի տվյալների էլեկտրոնային բազայում և համապատասխան գրանցամատյանի վարում.

14. ուսումնասիրում է թռիչքային պիտանիության դիրեկտիվները ՀՀ-ում գրանցված օդանավերի թռիչքային պիտանիության և թռիչքների անվտանգության ապահովման նպատակով.

15. իրականացնում է օդանավ շահագործողների կողմից Կոմիտեի հաստատմանը ներկայացվող շահագործողական հատուկ դրույթների ուսումնասիրություն:

16. իրականացնում է ՀՀ օդանավ շահագործողների կողմից ներկայացվող թռիչքային պիտանիության պահպանմանը վերաբերվող ձեռնարկների ուսումնասիրություն և Վարչության պետին ներկայացնում է իր մասնագիտական գնահատականը դրանք հաստատելու հնարավորության վերաբերյալ:

17. կատարում է ավիաընկերություններում թռիչքակիրներից ստացված տեղեկատվության ամբողջականության և որակի ընտրովի ուսումնասիրություն օդանավերի թռիչքային պիտանիության պահպանման վերաբերյալ վերլուծության նպատակով:

18. Գլխավոր մասնագետ-տեսուչին՝ Կոմիտեի նախագահի հետ համաձայնեցմամբ կարող է նաև վերապահվել օտարերկրյա օդանավերի անվտանգության գնահատման (SAFA) տեսուչի, SAFA ավագ տեսուչի կամ ազգային շահագործողների գծով SAFA համակարգողի պարտականությունների կատարումը:

19. հաստատում է կազմակերպությունների ղեկավար կազմի ձև 4 (Form 4) ձևաչափը:

20. իրականացնում է թռիչքների անվտանգությանն առնչվող վտանգների հայտնաբերման, ռիսկերի գնահատման, տվյալների հավաքագրման ու վերլուծության գործընթացները:

21. տարեկան կտրվածքով վերանայում է թռիչքների անվտանգության ազգային պլանը (National Aviation Safety Plan) թռիչքային պիտանիության մասով:

22. վեր է հանում թռիչքային պիտանիության մասով թռիչքների անվտանգությանը վերաբերող ռիսկերը, հիմնական բնութագրերի ցուցիչները (Key Performance Indicators), թռիչքների անվտանգության ապահովման արդյունավետության ընդհանուր ցուցիչները, թռիչքների անվտանգության բնութագրերի ցուցիչները (Safety Performance Indicators) և վերահսկում սահմանվածից շեղման միտումները:

23. իրականացնում է ավիացիոն իրադարձությունների և միջադեպերի զեկույցների գնահատման, վերլուծության, քննության անցկացման, դասակարգման և վերջնական զեկույցի պատրաստման գործընթացները թռիչքային պիտանիության մասով:

24. սահմանում է թռիչքների անվտանգության ընդունելի մակարդակի (Acceptable Level of Safety) գործընթացը թռիչքային պիտանիության մասով:

**Կոմպետենցիա պահանջող գործառույթները կիրառելի են համապատասխան կոմպետենցիան հավաստող փաստաթղթի առկայության դեպքում:**

## **2.2. Իրավունքները՝**

- Վարչության խնդիրների և գործառույթների իրականացման ժամանակ համագործակցել Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցների հետ:
- իր իրավասության սահմաններում մշակել ավիացիոն տեխնիկայի թռիչքային պիտանիության, տեխնիկական շահագործման և վերանորոգման բնագավառում քաղաքացիական ավիացիայի գործունեությունը կանոնակարգող նորմատիվ ակտեր, հրահանգներ, կարգադրություններ ու այլ հրահանգիչ փաստաթղթեր, ինչպես նաև վերահսկել և պահանջել դրանց կատարումը բոլոր շահագործողների կողմից:
- սահմանված կարգով կասեցնել քաղաքացիական օդանավերի շահագործումը թռիչքների անվտանգությանը և թռիչքային պիտանիությանը սպառնացող թերությունների բացահայտման դեպքում՝ անմիջապես տեղեկացնելով Վարչության պետին և օդանավ շահագործողին:
- Կոմիտեի կամ Վարչության առաջադրանքներով իրականացնել ՀՀ տարածքում և արտասահմանում ավիացիոն տեխնիկայի տեխնիկական սպասարկման և վերանորոգման կազմակերպությունների, տեխնիկական սպասարկման բազային և գծային կայանների, օդանավ շահագործող կազմակերպությունների

ստորաբաժանումների և ներկայացուցչությունների կողմից օդանավերի տեխնիկական սպասարկման աշխատանքների վերաբերյալ սահմանված նորմերի պահանջների կատարման հսկողություն (ստուգում) ու ստանալ այդ հարցերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ: ՀՀ-ում գրանցված ձեռնարկությունների բոլոր ղեկավարներին սահմանված կարգով ներկայացնել պահանջներ օդանավերի թռիչքային պիտանիության ապահովման ձեռնարկների և միջոցառումների կատարման վերաբերյալ:

- ներկայացնել առաջարկություն ավիացիոն տեխնիկական անձնակազմի այն մասնագետների վերաբերյալ, որոնք ենթակա են վերջիններիս տրված վկայականի գործողության դադարեցման կամ կասեցման, եթե խախտվել են օդանավի տեխնիկական սպասարկման ընդունված նորմերը:
- սահմանված կարգով զրկել ինժեներատեխնիկական անձնակազմին արտադրական առաջադրանք կատարելու իրավունքից, որոնք չգիտեն, խախտում են կամ չեն կատարում ավիացիոն տեխնիկայի տեխնիկական շահագործման կանոնները:
- որոշումներ ընդունել սարքավորումների նվազագույն ցանկի MEL (թույլատրելի անսարքությունների նվազագույն ցանկի) նորմերից շեղման դեպքերում օդանավերի հնարավոր շահագործման մասին, սահմանել կամ վերացնել տեխնիկական սահմանափակումները ավիացիոն տեխնիկայի շահագործման ընթացքում:
- առաջադրանքի, հայտի կամ շտապ գործուղման առկայության դեպքում սահմանված կարգով ընդգրկվել ՀՀ օդանավ շահագործողների թռիչքային անձնակազմի առաջադրանքի մեջ:
- սահմանված կարգով տալ օդանավերի տեխնիկական սպասարկման և վերանորոգման, թռիչքային պիտանիության և շահագործման հարցերին առնչվող հրահանգներ ստուգվող տեխնիկական սպասարկման և վերանորոգման կազմակերպությունների ու օդանավ շահագործող կազմակերպությունների ղեկավար անձանց՝ զեկուցելով Վարչության պետին:
- անարգել մուտք գործել ՀՀ օդանավակայանների վերահսկելի և հատուկ վերահսկելի գոտիներ, գտնվել օդանավում, այդ թվում՝ թռիչքի ընթացքում:
- անհրաժեշտության դեպքում նյութեր ներկայացնել նախազգուշացում կամ հրահանգ տալու և մեկանգամյա ստուգումներ անցկացնելու համար:

### **2.3. Պարտականությունները՝**

- հսկողություն սահմանել ՀՀ օդանավ շահագործողների և տեխնիկական սպասարկման կամ վերանորոգման կազմակերպությունների կողմից օդանավերի տեխնիկական սպասարկման և թռիչքային պիտանիության պահպանման աշխատանքների նկատմամբ՝ սահմանված նորմերի պահանջների կատարմամբ:
- ձևակերպել ՀՀ օդանավ շահագործողների տեխնիկական սպասարկման, տեխնիկական սպասարկման և վերանորոգման կազմակերպությունների ու գծային կայանների սերտիֆիկացման հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերը:
- կատարել ՀՀ տարածքի օդանավակայաններ ժամանած օտարերկրյա օդանավերի ստուգումներ՝ համաձայն Եվրոպական Միության Թռիչքների Անվտանգության Գործակալության (EASA) կողմից սահմանված չափանիշների:
- մշակել Վարչության խնդիրներին և գործառույթներին վերաբերող կարգեր ու նորմատիվային փաստաթղթեր:
- ուսումնասիրությունների և տեսչական ստուգումների արդյունքում հայտնաբերված թերությունների վերացման վերաբերյալ տալ համապատասխան ցուցումներ և պահանջել ձեռնարկել թերությունները վերացնելուն ուղղված համապատասխան գործողություններ:
- վերահսկել Վարչության կողմից իրականացվող ՀՀ օդանավ շահագործողների, օդանավերի տեխնիկական սպասարկման կազմակերպությունների, օդանավերի

տեխնիկական սպասարկում իրականացնող ինժեներատեխնիկական մասնագետների տեխնիկական սպասարկման թույլտվություն շնորհելու գործընթացը:

### **3. Պաշտոնին ներկայացվող պահանջները**

#### **3.1. Կրթություն, որակավորման աստիճանը**

- բարձրագույն ավիացիոն կամ տեխնիկական կրթություն.
- ունի օդանավերի տեխնիկական սպասարկման ավիացիոն մասնագետի գործող վկայական (բացառիկ դեպքերում օդանավի տեխնիկական սպասարկման ավիացիոն մասնագետի գործող վկայականը պարտադիր չէ, եթե ավիացիոն մասնագետը ունի օդանավի տիպի ուսուցման վկայական):

#### **3.2. Մասնագիտական գիտելիքները**

- 1) ունի իր լիազորությունների հետ կապված անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- 2) տիրապետում է թռիչքային պիտանիությանը վերաբերող անհրաժեշտ տեղեկատվությանը.
- 3) անգլերեն լեզվի իմացություն, որը թույլ է տալիս աշխատել Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ICAO) և այլ միջազգային ավիացիոն կազմակերպությունների փաստաթղթերի և տեխնիկական գրականության հետ.
- 4) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
- 5) ունի անհրաժեշտ գիտելիքներ ՀՀ քաղաքացիական ավիացիայում շահագործվող օդանավերի, թռչող ապարատների և շարժիչների թռիչքային պիտանիության ու տեխնիկական շահագործման կանոնների և կառուցվածքի, դրանց տեխնիկական սպասարկման ծրագրերի և մեթոդների վերաբերյալ:

#### **3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը**

Թռչող ապարատների և շարժիչների կամ ավիացիոն և ռադիոէլեկտրոնային սարքավորումների գծով ավիացիոն մասնագետ է, ունի առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ Վարչության առաջատար կամ գլխավոր մասնագետի պաշտոնում կամ օդանավերի թռիչքային պիտանիության ու պահպանման կամ տեխնիկական սպասարկման կազմակերպությունում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ: